



Ազդարարության Trumpet's Sound փող

56-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՀՈԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2025





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ ԵՐԿԱՄՍՅԱ ՔԵՐՔՐ ԲԻՆԵՆԻ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՐԱՏԱՐԱԿՈՒՔՅՈՒՆԸ Է: Պատասխանատու խմբագիր՝ ԻոՎԻԿ ՀՐԱՅ ԳՈՒՅՈՒՆԴՅԱՆ:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչի՞ մասին եկք մտածում Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Մեծ հավատք Զ. Ս. Ռայլ

Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը (1) Դոն Սթորմր

Նա սովորեցրեց նրանց (4) Նեյլ Բուքման

Ունայնություն Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

Լուրեր Կիպրոսից Դոկտ.՝ Դանիել Ջեյմս

Ինչի՞ մասին ենք մտածում

«Եթե Քրիստոսի հետ հարություն եք առել, ուրեմն վերին բաները փնտրեցեք, որտեղ Քրիստոսն է՝ նստած Աստծո աջ կողմում: Վերին բաների մասին մտածեցեք և ո՛չ թե այն, որ երկրի վրա է: Որովհետև դուք մեռաք, և ձեր կյանքը պահված է Քրիստոսի հետ՝ Աստծո մեջ: Երբ Քրիստոսը, Որ մեր կյանքն է, հայտնվի, այն ժամանակ դուք էլ Նրա հետ փառքով պիտի հայտնվեք» (Կող. 3:1-4):

Երբևէ փորձե՞լ եք նկարագրել աշխարհը և այն ամենը, ինչ կա նրանում.

- Ֆիզիկական անսահման ցավ, հիվանդություններ ու տկարություն:
- Հարկերը՝ մեկը մյուսի հետևից: Մարդիկ մի ամբողջ կյանք աշխատում են՝ դրանք վճարելու համար:
- Անհանգստությամբ լի կյանք, հատկապես մեր երեխաների, թոռների ու նրանց ապագայի նկատմամբ:
- Ջրհեղեղներ, երկրաշարժեր, հրդեհներ, վախ ու անխաղաղություն:
- Կառավարություններ ընդդեմ կառավարությունների, պատերազմներ և Երրորդ համաշխարհային պատերազմի վախ:
- Մարդիկ, ովքեր ապրում են թմրամիջոցներով, ակոհոլով և դեղահաբերով, միայն թե քնել կարողանան:

Սակայն պետք է մտածենք վերին բաների մասին, որոնք հստակ գրված են Աստվածաշնչում.

- Նոր մարմին՝ առանց թերության, առանց ձեռնափայտի, ակնոցի կամ դեղորայքի անհրաժեշտության: Քաղցկեղ այլևս չի լինի:
- Իսաղաղություն, որ երբեք չենք փորձառել:
- Անհանգստության, ցավի և հիվանդության բացակայություն:
- Աստծո ներկայության մեջ կլինենք:
- Հավիտյան Տեր Հիսուսի հետ կլինենք:

Աստվածաշունչն ասում է, որ Երկնքում կլինեն բաներ, որոնք ոչ մի աչք չի տեսել և ոչ մի ականջ չի լսել: Մենք ծնկի կզանք և կերկրպագենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն: Կգովերգենք ու կերգենք հավիտենական ուրախության զգացումով:

Ուստի մտածե՛նք այս բաների մասին, քանզի այս աշխարհը իր ամբողջ պարունակությամբ կանցնի, բայց հավատացյալները երկնքի արքայությունը կժառանգեն:

Հ. Գ.

Մեծ հավատք

(Մատթ. 15:21-28)

Այս հատվածում պատմվում է մեր Տիրոջ հրաշքներից մեկի մասին: Դեպքերը, որոնք ուղեկցում են այս հրաշքը, շատ հետաքրքրական են: Եկե՛ք դիտարկենք դրանք հերթականությամբ ու տեսնենք, թե ինչ ենք սովորում դրանցից: Սուրբ Գրքի այս պատմվածքի ամեն մի բառ լի է խորը իմաստով:

Առաջին՝ տեսնում ենք, որ ճշմարիտ հավատքը երբեմն կարող է հայտնվել այնտեղ, որտեղ ամենաքիչն էինք սպասում: Քանանացի մի կին աղաղակում է Տիրոջը՝ իր դստեր համար ողորմություն հայցելով. «Ողորմիր ինձ, Տե՛ր, Դավթի Որդի»: Եթե նա այս աղոթքն արած լիներ Բեթանիայում կամ Երուսաղեմում, այն արդեն մեծ հավատք կցուցադրեր: Բայց երբ տեսնում ենք, որ նա եկել է Տյուրոսի ու Սիդոնի սահմաններից, այս աղոթքը մեզ անկասկած զարմացնում է: Սա մեզ սովորեցնում է, որ հավատքը տեղանքով չի որոշվում, այլ շնորհքով: Մարդ կարող է ապրել մարգարեի տանը, ինչպես Գեեզին՝ Եղիսե մարգարեի ծառան, և դեռևս մնալ անհավատ, ապաշխարության չհասած և աշխարհին կապված: Մյուս կողմից՝ մարդ կարող է ապրել մոայլ կռապաշտության մեջ, ինչպես Նեեմանի տան փոքրիկ աղջիկը, բայց լինել Աստծո ու Նրա Օծյալի հավատարիմ վկան: Ուստի երբեք հուսահատ չլինենք որևէ մեկի հոգու համար միայն նրա անբարե-

նպաստ վիճակի պատճառով: Մարդ կարող է ապրել Տյուրոսի ու Սիդոնի սահմաններում, բայց միևնույն ժամանակ նստել Աստծո արքայության սեղանի շուրջը:

Երկրորդ՝ տեսնում ենք, որ տառապանքը երբեմն մարդու հոգու համար օրհնություն է դառնում: Քանանացի այս մայրը, անկասկած, մեծ վիշտ է կրել: Նա տեսել է՝ ինչպես է չար ոգին տանջում իր սիրելի դստերը, և անօգնական է եղել: Բայց հենց այդ չարչարանքն է նրան բերել Քրիստոսի մոտ և սովորեցրել աղոթել: Առանց դրա՝ գուցե նա ապրեր և մահանար Աստծուց հեռու և անտարբեր: Մակայն իր վշտի մեջ նա մոտեցավ Հիսուսին: Նրա տառապանքը, իրոք, բարիի գործակից դարձավ:

Իսկապես ուշադրության արժանի է այն փաստը, որ ոչինչ այնքան չի ցուցադրում մեր տգիտությունը, որքան մեր անհամբերությունն ու զանգատը դժբախտության ժամանակ: Մենք մոռանում ենք, որ ամեն փորձություն Աստծուց ուղարկված պատգամ է հօգուտ մեզ: Դժվարությունները պետք է դրդեն մեզ մտածելու, կտրեն աշխարհից, Սուրբ Գիրքին դիմելու պատճառ դառնան, ծնկի բերեն աղոթքի: Առողջությունը, անշուշտ, բարիք է, բայց հիվանդությունն ավելի մեծ օրհնություն է, եթե այն մոտեցնում է մեզ Աստծուն: Բարզավաճ կյանքը ողորմություն է, բայց դժվար կյանքն ավելի մեծ ողորմություն է, եթե այն մոտեցնում է մեզ Քրիստոսին: Ամեն փորձություն ավելի լավ է, քան անփույթ ապրելը և մեղքի մեջ մեռնելը: Ավելի լավ է հազար անգամ տառապել, ինչպես քանանացի մայրը, և նրա պես վազել Քրիստոսի մոտ, քան թե ապրել ապահով, ինչպես հարուստ «անմիտը», և վերջում մահանալ առանց Քրիստոսի ու հույսի:

Երրորդ՝ տեսնում ենք, որ Քրիստոսի հետևորդները հաճախ Նրանից պակաս ողորմած ու կարեկցող են: Կինը, որի մասին պատմվում է այստեղ, Տիրոջ աշակերտների կողմից սրտաբացության չարժանացավ: Հնարավոր է՝ նրանք Տյուրոսի ու Սիդոնի բնակչին արժանի չհամարեցին Տիրոջ օգնության համար: Ամեն դեպքում, նրանք ասացին. «Հեռու ուղարկի՛ր նրան»:

Յավոք, այս հոգին այսօր էլ շատ է տարածված եկեղեցու ներսում: Շատերը, ովքեր իրենց հավատացյալ են համարում, հակված են Քրիստոսին որոնողներին հիասթափեցնելուն՝ նրանց օգնելու փոխարեն:

Նրանք չափազանց արագ և թերահավատորեն են մոտենում նորադարձների հավատքին և վերաբերվում են նրանց այնպես, ինչպես սուրբ Պողոսին, երբ նա նոր էր դարձի եկել. «...*շիալիստայով, թե նա աշակերտ է*»: Պետք է զգուշանանք այս հոգուց: Պետք է ձգտենք ունենալ Քրիստոսի միտքը: Նրա նման պետք է լինենք՝ հեզ, բարի, խրախուսող, հատկապես նրանց հանդեպ, ովքեր փրկություն են փնտրում: Ամենից առաջ՝ մարդկանց պետք է շարունակ հիշեցնենք, որ Քրիստոսի մասին չպետք է կարծիք կազմել քրիստոնյաների վարքի հիման վրա: Նրանց պետք է վստահեցնենք, որ մեր Տերը ավելի ողորմած է, քան Նրա լավագույն ծառաները: Պետրոսը, Հովհաննեսը, Հակոբոսը կարող են տրտնջալ և ասել. «*Հեռու ուղարկի՛ր նրան*», բայց նման խոսք երբեք Տիրոջ շուրթերից դուրս չի գա: Հնարավոր է՝ երբեմն ստիպված երկար սպասենք, ինչպես այս կինը, բայց Տերը երբեք չի մերժի հավատով եկողին:

Վերջապես տեսնում ենք, թե որքան գորավոր է շարունակական աղոթքը թե՛ մեզ համար և թե՛ ուրիշների: Դժվար է պատկերացնել այս ճշմարտության ավելի ցայտուն օրինակ, քան այս պատմությունն է: Սկզբում այս կնոջ աղոթքն անտեսված է թվում. Հիսուսը «*ոչ մի պատասխան չտվեց նրան*»: Բայց կինը շարունակեց աղոթել: Հետո Տեր Հիսուսի շուրթերից հնչեց մի խոսք, որը կարծես հիասթափեցրեց. «*Ես ուրիշի չուղարկեցի, այլ՝ Բարայելի տան կորած ոչխարներին*»: Այդուհանդերձ, կինը շարունակեց. «*Տե՛ր, օգնի՛ր ինձ*»: Դրանից հետո հնչեց ավելի սուր պատասխան. «*Չի կարելի մանուկների հացը վերցնել և շներին նետել*»: Բայց նույնիսկ այս պահին կինը Տիրոջ խոսքում միփթարություն գտավ և ասաց. «... *շները իրենց տերերի սեղանից ընկած փրշրանքներից են ուտում*»: Նրա համառ հավատքն ի վերջո պսակվեց. «*Ո՛վ կին, մե՛ծ է քո հավատքը. թող ուզածիդ պես լինի քեզ*»: Այս խոստումը երբեք չի խախտվել. «*Փնտրե՛ք, և պիտի գտնեք*»:

Հիշենք այս պատմությունը, երբ աղոթում ենք ինքներս մեզ համար: Երբեմն թվում է, թե մեր աղոթքներն անպտուղ են, և գուցե ավելի լավ է դադարենք: Բայց այդ գայթակղությունը սատանայից է: Եկե՛ք շարունակենք հավատալ ու աղոթել: Աղոթենք մեր մոլորեցնող մեղքերի դեմ, աշխարհի ոգու դեմ, սատանայի խորամանկությունների դեմ՝ առանց թուլանալու: Աղոթենք՝ ուժ ստանալու մեր պարտակա-

նությունները կատարելու համար, շնորհ ստանալու՝ փորձություններում տոկալու, և մխիթարություն ստանալու՝ դժվար պահերին: Համոզված լինենք, որ ամեն օր ծնկի անցկացրած ժամանակը ամենաօգտակարն է: Հիսուսը լսում է մեզ, և ժամանակին կտա պատասխանը:

Հիշենք այս պատմությունը, երբ միջնորդում ենք ուրիշների համար: Ունենք անապաշխար զավակներ, ունենք հարագատներ ու բարեկամներ, որոնց փրկության համար մտահոգ ենք: Եկե՛ք այս քանանացի կնոջ օրինակը վերցնենք ու նրանց հոգու վիճակը Քրիստոսի առաջ բերենք: Եկե՛ք գիշեր ու ցերեկ անվանական հիշենք նրանց մեր աղոթքներում և երբեք չհանձնվենք, մինչև պատասխան ստանանք: Գուցե տարիներ շարունակ սպասենք, գուցե մեր աղոթքներն անպտուղ թվան, բայց երբեք չդադարենք, հավատանք, որ Հիսուսը չի փոխվել: Նա, ով լսեց ու կատարեց այդ կնոջ խնդրանքը, կլսի նաև մեզ և մի օր մեր սրտին կպատասխանի խաղաղությամբ:

Ջ. Ս. Ռայլ

Տեր Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը (1)

1. Ընդհանուր նկարագիր

Ապագայի վերաբերյալ այնքան շատ գաղափարներ են հնչում նույնիսկ քրիստոնեական շրջանակներում, որ հեշտությամբ կարող ենք շփոթվել: Այդ գաղափարներից որոշները իրար հակասում են: Անկախ այդ ամենից, ոչ քրիստոնյաները Քրիստոսի ապագա գալուստը դիտում են որպես անհերթելիություն: Սա այդպես էր եկեղեցու պատմության սկզբից: *Պետրոսը խոսում է մարդկանց մասին, ովքեր հարցնում էին. «Ո՞ր է Նրա գալստյան խոստումը»:* Բայց ի՞նչ կարող ենք իմանալ: Ի՞նչ գիտենք:

Աստվածաշնչում Տիրոջ գալստյան վերաբերյալ մի շարք ճշմարտություններ հստակ ուսուցանված են:

1. Վերնատանը Տերն Իր աշակերտներին ասաց, որ եթե Ինքը գնա (իսկ Ինքը գնաց), ապա կրկին կգա և կվերցնի նրանց Իր մոտ: Նա խոստացավ, որ Ինքն անձամբ կգա: Նա չէր պատրաստվում այդ առաջադրանքը հանձնելու հրեշտակի կամ նույնիսկ հրեշտակապետի:
2. Համբարձումից հետո աշակերտները նայում էին երկնքին: Երկու հրեշտակ հայտնվեցին նրանց առաջ և ասացին, որ այս նույն Հիսուսը, ով համբարձվեց երկինք, նույն կերպ կվերադառնա, ինչպես տեսան Նրան գնալիս:
3. Երբ Պողոսը գրում էր Թեսաղոնիկեցիներին, նա ուսուցանում էր, որ բոլոր հավատացյալները՝ թե՛ մահացածները և թե՛ կենդանի մնացածները, վեր կբարձրացվեն՝ Տիրոջը օդում դիմավորելու: Այս իրադարձությունը կոչվում է «հափշտակություն» (լատիներեն բառից, որը նշանակում է՝ վեր հափշտակվել): Մահացածները նախ հարություն կառնեն, և մենք, որ դեռ կենդանի ենք, նրանց հետ կհափշտակվենք՝ Տիրոջը օդում դիմավորելու և ապա միշտ Նրա հետ լինելու:
4. Այս ճշմարտությունը Պողոսն ավելի խորությամբ ներկայացրեց Կորնթացիներին ուղղված իր առաջին նամակում: Բոլորս չենք մահանալու: Բայց մահացած թե կենդանի, երբ Տերը գա, բոլորս կփոխվենք, որպեսզի ունենանք հարության մարմիններ: Մեր այսօրվա մահկանացու մարմինները՝ ապականելի, անպատվելի, տկար, մարմնավոր և մահկանացու, կփոխվեն և կդառնան անապական, փառավոր, զորավոր, հոգևոր և անմահ:
5. Հայտնություն 19-րդ գլխում կարդում ենք երկնքից երկիր Տիրոջ հաղթական վերադարձի մասին: Հովհաննեսը Նրան պատկերում է սպիտակ ձիու վրա հեծած եկող՝ պատերազմ անելու և դատելու: Նա կհարվածի ազգերին, ովքեր ապստամբել են Իր դեմ, և կիշխի երկաթե գավազանով: Նա լինելու է բացարձակ միապետ:

Երկրի վրա տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ այլ ճշմարտություններ նույնպես հստակ ուսուցանված են:

1. Ձիթենյաց լեռան քարոզում Տեր Հիսուսը խոսեց Մեծ նեղության մասին, որը կսկսվի այն ժամանակ, երբ տեղի կունենա Դանիելի

կանխատեսած իրադարձությունը. «Որովհետև այն ժամանակ այնպիսի մեծ նեղություն պիտի լինի, որի նմանը աշխարհի սկզբից մինչև հիմա չի եղել և չի էլ լինի» (Մատթ. 24:21):

2. Դանիելը մարգարեացել է 70 շաբաթի (490 տարվա) մասին, որը բացառիկ նշանակություն ունի հրեական պատմության մեջ: Այդ 70-րդ շաբաթը կսկսվի, երբ տեղի ունենա «ավերմունքի պղծությունը» (սրբության վայրը պղծող սրբապղծությունը): Երբ սա տեղի ունենա, Հրեաստանում գտնվողները կփախչեն լեռները՝ իրենց անվտանգությունը փնտրելու:
3. Դանիելը մարգարեացել է նաև մեկ այլ փաստի առումով, որ մի գալիք իշխան յոթ տարվա պայմանագիր կստորագրի հրեա ժողովրդի հետ, սակայն կես ժամկետից՝ երեքուկես տարի հետո (42 ամիս կամ 1260 օր), նա կխախտի այդ պայմանագիրը:
4. Հայտնության գրքում կարդում ենք համաշխարհային գալիք իշխանի մասին՝ «առաջին գագան»-ը, ով իր իշխանությունը կհաստատի աշխարհի մեծ մասի վրա: Նա կունենա օգնական՝ «երկրորդ գագանը», որը կոչվում է նաև «կեղծ մարգարե»: Այս երկուսը կիշխեն որպես բռնապետներ՝ պարտադրելով, որ առաջին գագանին երկրպագեն որպես աստծո: Մարդկանց կյանքը լիովին վերահսկվելու է այնպես, որ միայն հատուկ նշան ունեցողները կկարողանան գնել և վաճառել: Ովքեր չերկրպագեն այս աշխարհային իշխանին, կդատապարտվեն մահվան:
5. Նույն ժամանակ Աստված Իր բարկությունը կթափի ապստամբ աշխարհի վրա: Երեք հաջորդական դատաստան կհասնի երկրի վրա՝ կնիքի դատաստանները, շեփորի դատաստանները և թասերի դատաստանները: Այս դատաստանի ժամանակահատվածը կոչվում է «Տիրոջ օրը»:

Դոն Սթոքմըր



Նա սովորեցրեց նրանց (4)

Մատթեոս 5-րդ գլուխ

Մաս 4 – Օրենքի պահանջները

«Լսե՛ք եք, որ նախնիներին սավեց. «Մի՛ սպանիր, որովհետև ով սպանություն անի՝ պիտի դատապարտվի»։ Բայց Ես ասում եմ ձեզ, եթե մեկն առանց պատճառի բարկանա իր եղբոր վրա՝ դատաատանի ենթակա կլինի։ Եվ ով իր եղբորը Ռաքա սախ՝ ասոյանին ենթակա կլինի։ Իսկ ով իր եղբորը «հիմար» սախ՝ գեհեների կրակին ենթակա կլինի»։

Ժողովուրդը սովորել էր, որ սպանություն արգելող պատվիրանը սահմանափակվում է միայն արյուն թափելու արարքով։ Բայց այժմ Տերը սովորեցնում է, որ այն նույն կերպ արգելում է սպանության սերմերը՝ գայրույթը, ծաղրն ու վիրավորանքը։ Կարող է պատահել, որ ես մարդ չեմ սպանել, բայց սպանությունն իմ ներսում է. ես մարդասպան եմ, որը դեռ արյուն չի թափել, բայց, այնուամենայնիվ, մարդասպան եմ։

Ի՞նչ անեն։ Արդյո՞ք ես դատապարտված եմ առանց հույսի։ Ես անկարող եմ իմ սիրտը մաքրել։ Ինչպե՞ս ապրեն։

Ինչպե՞ս կարող է մեղավորն արդարացվել. հարցի պատասխանը տրվելու է համապատասխան ժամանակին, բայց հիմա Տերն Իր աշակերտներին սովորեցնում է, թե նրանք ինչպես պետք է ապրեն։

«Ուստի, եթե զոհասեղանի վրա քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, որ եղբայրդ քո դեմ մի բան ունի, քո ընծան թող սեղանի առջև, նախ զնա՝ եղբորդ հետ հաշտվի՛ր ու հետո ե՛կ, ընծադ մատուցի՛ր»։

Եթե քո եղբայրը բան ունի քո դեմ, ապա փորձի՛ր այն շտկել։ Սովորի՛ր ապրել մաքուր խղճով և խաղաղարար կերպով՝ դրսևորելով այն խոնարհությունն ու հեզությունը, որոնք բնորոշ են ճշմարիտ աշակերտին։ Սա ավելի կարևոր է, քան միայն արտաքին բարեպաշտությունը։

«Ուստիդ հետ շուտով համաձայնության եկ, քանի դեռ նրա հետ նախապարհին ես։ Գուցե նա քեզ դատավորի ձեռքը մատնի, և դատավորն էլ՝

նստիկանի, և բանտ նետվես: Ճշմարիտ եմ ասում քեզ, այնտեղից երբեք դուրս չես գա, մինչև չվճարես վերջին մանրադրամը»:

Գու սխալ ես գործել, և քո հակառակորդն արդարություն է պահանջում: Հաշտվի՛ր: Ընդունի՛ր քո մեղքը և շտկի՛ր այն: Գործի՛ր արագ, անկեղծ, գոհողությամբ: Այստեղ ևս տեսնում ենք՝ ինչպես է ճշմարիտ աշակերտի բնավորությունը դրսևորվում իրական արարքներում:

«Լսել եք, որ նախնիներին ասվեց. «Մի՛ շնացիր»: Բայց Ես ձեզ ասում եմ, ով մի կնոջ նայի նրան ցանկանալու համար, արդեն շնություն է արել նրա հետ իր սրտում»:

Եթե սա է Աստծո օրենքի ճշմարտությունը, ապա ո՞վ կարող է մաքուր համարվել: Բոլորս դատապարտված ենք: Եթե միայն մեր աչքը կամ ձեռքը ստիպեր մեզ մեղք գործել, գուցե հրաժարվեինք դրանցից հանուն մաքրության: Բայց մեղքի արմատը սրտում է՝ մեր խորը էության մեջ, որն ընկած և պղծված է: Տերն իր աշակերտներին ցույց է տալիս մեղքի լոջությունը և այն, որ պետք չէ արդարացումներ գտնել:

Գործի՛ր, լուծի՛ր մեղքի հարցը, մի՛ անտեսիր այն:

Ժամանակին ամուսնալուծությունն ընդունելի էր մարդկանց սրտերի կարծրության պատճառով (Մատթ. 19:8): Բայց Աստծո կողմից ամուսնության կարգի և մեր պատասխանատվության հանդեպ այդ վերաբերմունքը չի համապատասխանում Հիսուսի աշակերտների կենսակերպին:

«Լսել եք նաև, որ նախնիներին ասվեց. «Երդմնագանց մի՛ լինիր, այլ կատարի՛ր Տիրոջն արած երդումներդ»: Բայց Ես ձեզ ասում եմ. Բնավ երդում մի արեք... Բայց խոսելիս, ձեր «այոն» այո լինի, ձեր «ոչը»՝ ոչ: Մրանից ավելին չարից է առաջ գալիս»:

Ինչո՞ւ էին մարդիկ երդվում երկնքով, երկրով կամ Երուսաղեմով: Որովհետև նրանց «այոն» միշտ «այո» չէր, և նրանց «ոչը»՝ միշտ «ոչ» չէր, և բոլորը դա գիտեին: Արդար լինելը պահանջում է խոնարհություն և լեզվի գգուշություն: Արդյոք սա՞ չէ այն, ինչ սպասում ենք Տիրոջ աշակերտից:

«Լսել էք, որ ասվեց. «Աչքի տեղ՝ աչք, ատամի տեղ՝ ատամ»: Բայց Ես ձեզ ասում եմ. չարին մի՛ հակառակվիր, այլ, եթե մեկը աստակի աջ ծնոտիդ, մյուս ծնոտդ էլ դարձրու նրան»:

Օրենքը պահանջում էր, որ պատիժը համարժեք լիներ հանցանքին: Սակայն ժողովուրդը դա վերածել էր վրեժխնդրության: Այդպիսով, նրանք ոչնչով չէին տարբերվում իրենց վնաս հասցրած անձից: Տերը շրջեց այս եսակենտրոն վերաբերմունքը՝ սովորեցնելով Իր աշակերտներին ապրել Աստծուն փառք բերող կերպով, նույնիսկ իրենց արժանապատվության կամ ունեցվածքի գնով: Այս ամենի մեջ բացահայտվում է հենց Աստծո բնավորությունը:

«Լսել էք, որ ասվեց. «Միրի՛ր քո դրացուն և սոսի՛ր քո թշնամուն»: Բայց Ես ձեզ ասում եմ. սիրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարի՛ք արեք ձեզ ատողներին և սողոթեցե՛ք նրանց համար, ուրբեր վատ են վարվում ձեզ հետ և հալածում, որպեսզի ձեր երկնավոր Հոր որդիները լինեք»:

Վայ՛ մեզ, եթե Աստված մեզ նման լիներ: Ո՛րք էինք փախչելու, եթե Նա չսիրեր Իր թշնամիներին: Բայց Նա ողորմած է, շնորհալի և պատրաստ է ներելու: Նա ամեն օր ցույց է տալիս Իր սերը՝ արեգակով և անձրևով:

«Ուրեմն դուք կատարյալ եղեք, ինչպես կատարյալ է ձեր Հայրը, Որ երկնքում է»:

Տերն Իր աշակերտներին պարզ ցույց տվեց, թե ինչ է պահանջում: Արդյո՞ք դա բարոյական կատարելություն է: Ո՛չ: Նա գիտեր, որ ընկած վիճակում նրանք ունակ չեն կատարելության: Նա պահանջում է, որ Իր աշակերտներն արդարացումներ չգտնեն իրենց մեղքի համար, անփույթ չլինեն իրենց բարոյական ծախողումների հանդեպ և ամբողջ սրտով ընդունեն այն ամենը, ինչ Ինքը սովորեցրել է:

Ո՛վ կհամարձակվի անտեսել Նրա խոսքերը:

Նեյլ Բուքման



Ունայնություն

Հովհ. 4:1-42

Տերկայիս ապականված ու եսասեր հասարակության մեջ շատերն են հարցնում. «Ի՞նչ է երջանկությունը», «Ո՞րն է իսկական ուրախությունը»:

Տարիներ առաջ մի երիտասարդ կին հաճախ էր ինձ նմանօրինակ հարցերով դիմում: Նա խաղաղություն, ուրախություն, կյանքի իմաստ ու երջանկություն էր փնտրում:

Մի օր նա զանգեց ինձ և ասաց, որ իր սրտում ուրախության ոչ մի նշույլ չկա: Ես հարցրի նրան. «Ի՞նչ ես զգում քո սրտում»: Նա իսկույն պատասխանեց. «Ոչի՛նչ, ոչի՛նչ չեմ զգում»: Երբ հարցրի, թե ինչպես կարող է մարդը ոչինչ չզգալ, նա կրկնեց իր պատասխանը. «Ոչի՛նչ, ոչի՛նչ չեմ զգում, ես լիովին դատարկ եմ»:

Դժբախտաբար, նա բացառություն չէր: Նույնիսկ Սողոմոն թագավորը, որ ուներ այն ամենը, ինչին ձգտում է յուրաքանչյուր քո՛ հարըստություն, համբավ, հաճույքներ, հետևյալն է գրել. *«Ունայնություն ունայնությանց,- ասաց ժողովորդը,- ունայնություն ունայնությանց, ամեն բան ունայն է: Ի՞նչ օգուտ ունի մարդ արևի տակ քաշած իր ողջ աշխատանքից... Բոլոր խոսքերը հատնում են, մարդը չի կարող խոսել: Աչքը տեսնելով չի կշտանա ու ականջը լսելով չի լցվի... Արևի տակ բոլոր գործված գործերը տեսա, և ահա ամենն էլ ունայնություն ու հոգու տանջանք է»* (Ժող. 1:2-3, 8,14):

Աստվածաշնչում կարդում ենք ևս մեկի մասին, ով այս կյանքում բավարարվածություն էր փնտրում: Հովհ. 4:1-42-ում կարդում ենք սամարացի մի կնոջ մասին, ով կյանքում փորձել էր ամեն բան, բայց դարձյալ դատարկության զգացում ուներ: Աստվածաշունչն ասում է, որ նա հինգ անգամ ամուսնացած է եղել և այդ ժամանակ էլ մի տղամարդու հետ էր ապրում ու դարձյալ ո՛չ խաղաղություն ուներ, ո՛չ էլ ուրախություն: Նա հարատև ուրախություն էր փնտրում. նրա շարունակաբար ձախողված հարաբերությունները լոկ ժամանակավոր ու աննպատակ հաճույքներ էին եղել:

Հիսուսը նրան պատմեց Կենդանի ջրի մասին: Նա շեշտեց, որ այս աշխարհի բաները բնավ չեն կարող հագուրդ տալ մարդուն, և մարդիկ, առանց Քրիստոսի, միշտ ծարավ կմնան: Այդ կինը, կարծելով, թե խոսքը բառացիորեն հենց ջրի մասին է, Հիսուսից կենդանի ջուր խնդրեց:

Հանկարծ նա հանդիմանվեց իր մեղքերի համար: Հիսուսը նրան պատվիրեց գնալ ու իր ամուսնուն կանչել, թեպետև գիտեր, որ այդ տղամարդը նրա ամուսինը չէր: Հիսուսն ուզում էր, որ նա խոստովանի իր մեղքերը: Նա, ով թաքցնում է իր մեղքը, բնավ չի կարող փրկվել:

Այդ կինն անմիջապես փորձեց փոխել գրույցի թեման: Մեղքի համար հանդիմանվողներից շատերն են այսօր փորձում փոխել գրույցի թեման՝ վիճաբանելով կրոնական տարակարծությունների շուրջ: Նրանց բնորոշ է այսպիսի հարցեր տալը. «Որտե՞ղ պետք է պաշտամունք մատուցենք», «Ո՞ր կրոնն է ճիշտ»:

Աշխարհիկ հաճույքները և նույնիսկ կրոնը չեն կարող հագեցնել մարդու հոգևոր ծարավը: Միայն Քրիստոսից բխող Կենդանի ջուրը հավիտենական կյանքն է, որ կարող է հագուրդ տալ ու լցնել մեր սրբուների դատարկությունը:

Հնդիկ Սադու Սունդար Սինգը, որով հայրս շատ էր հիանում, մի անգամ ասել է. «Ես ծարավից մեռնում էի, երբ հոգևոր աչքերս բացվեցին, տեսա նրա խոցված կողից բխող Կենդանի ջրի գետերը, խմեցի դրանից և հագեցա: Ծարավս անցավ: Այդ ժամանակվանից ի վեր միշտ խմել եմ կյանքի ջրից ու դադարել այս աշխարհի ավազուտ անապատում այթեխստ լինելուց»:

Վեր.՝ Հովսեփ Հովսեփյան

«Այն ժամանակ Հիսուսն իր աշակերտներին ասաց. «Եթե մեկն ուզում է գալ Իմ հետևից, թող իր անձն ուրանա և իր խաչը վերցնի ու Ինձ հետևի. որովհետև, ով կամենում է իր անձը փրկել՝ պիտի կորցնի այն: Եվ ով իր անձը կորցնի Ինձ համար, կգտնի այն»:

Մատթ. 16:24-25

Լուրեր Կիպրոսից

«Շտապի՛ր շուտով ինձ մտտ գալ» (Բ Տիմ. 4:9)

Մեծ օրհնություն էր Դերենիկ Պարճամյանի և ինձ համար այս տարվա հունիսին Կիպրոս այցելելը: Մա մեր առաջին այցն էր այս պատմական կղզի, որի բնակչությունն այժմ կազմում է մոտ 1.4 միլիոն մարդ: 2025 թ.-ի վիճակագրության համաձայն՝ Կիպրոսում ապրում է մոտ 3,500 հայ: Նրանց մեծ մասը բնակվում է Նիկոսիա, Լիմասոլ և Լաոնակա քաղաքներում:

Դերենիկը Հայաստանի Մանկանց ավետարանչության ընկերակցության (CEF) առաջնորդն է: Մեր փափագն էր հանդիպել Կիպրոսի «International Christian Fellowship» եկեղեցու մի քանի առաջնորդների հետ ու պատմել նրանց CEF-ի աշխատանքների մասին: Մա այն եկեղեցին է, որտեղ հաճախում է Հայաստանի CEF-ի հիմնադիրներից մեկը՝ Եվնիկե Նասանյան քույրը: Մեր հավատարիմ քույրը ներշնչանք էր շատերի համար, երբ CEF-ը մուտք գործեց Հայաստան: 1991 թ.-ին նա առաջին անգամ այցելեց Երևան այս նպատակով: Մեր կազմակերպության՝ «Armenian Christian Mission»-ի հիմնադիր Հրաչ Գույունյանի սկզբնական խրախուսանքն ու աջակցությունն Աստծո շնորհքով դեռ շարունակվում է մինչ օրս:

Մենք հնարավորություն ունեցանք ծառայության մասին պատմելու և ավետարանչական փոքր պատգամ փոխանցելու «Logos» քրիստոնեական դպրոցում, որը հիմնվել է որպես «Limassol Gospel Hall»-ի նախագիծ: Աստծո Խոսքով ծառայեցինք նաև սուրբգրոց սերտողության և աղոթաժողովի ժամանակ:

Տիրոջ շնորհքով ներկայացրինք Պողոսի՝ Տիմոթեոսին ուղղված երկրորդ նամակի ամփոփ նկարագիրը՝ հատկապես շեշտադրելով վերջին գլուխը, որտեղ Պողոսը բանտում էր՝ գուրկ սրբերի եղբայրասիրությունից: Նա գուցե միայն նրանց տեսնել էր ուզում: Տիմոթեոսին ուղղված այս կոչն ուղիղ էր, սրտի խորքից. «Շտապի՛ր շուտով ինձ մտտ գալ»: Ավելի պարզ. «Տիմոթեո՛ս, խնդրո՛ւմ եմ՝ արի՛, որքան հնարավոր է շուտ»:

Բոլորս պետք է միմյանց մոտ լինենք՝ որպես Նրա ծառաներ, և աջակցենք ծառայություններում, հատկապես հիմա, երբ մեր երկրային ժամանակը մոտենում է ավարտին:

Որպես միսիոներական կազմակերպություններ և եկեղեցիներ՝ ACM-ում, CEF-ում և տեղական եկեղեցիներում միասնական ջանք ենք գործադրում Ավետարանը փոխանցելու գործում: Սակայն նույնքան կարևոր է անձնական ներկայությունը, որ Պողոսը փնտրեց: Նա հիշատակում է մոտ 16 անուն: Մեր կազմակերպության յուրաքանչյուր աշխատակից շատ թանկ է Տիրոջ աչքում, և Աստծո սիրալիր հպումը պետք է արտահայտվի բոլորիս միջոցով:

Միրելի առաքյալը, որ ուսուցանել և սփռվել է եկեղեցիներին ու առաջնորդներին, ևս մեկ անգամ հիշեցնում է Տիմոթեոսին իր փափագի մասին. *«Աշխատի՛ր գալ ձևերը վրա չհասած: Քեզ բարևում են Եվբուդոսը, Պուդեարը, Լինոսը, Կրավդիան և բոլոր եղբայրները»* (Բ Տիմ. 4:21):

Թող Տեր Աստվածը մեր բոլորի սրտերում դաջի փափագ՝ միմյանց ցուցաբերելու սեր, հոգածություն և անձնական ներկայություն, քանի դեռ բոլորս շարունակում ենք ծառայել մեր օրինյալ Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

Դոկտ.՝ Դանիել Ջեյմս